*Հեղինակ՝ Էլիզա Քեոշկարյան*

**«Լվացքի մեքենա և պահարան»**

**Խաղի նպատակը՝**
Զարգացնել երեխայի սոցիալ-կենցաղային հմտությունները, տարբերակել մաքուր ու կեղտոտ հագուստը, ծանոթանալ հագուստ լվանալու քայլերի հաջորդականությանը, մաքուր և կեղտոտ հագուստները համապատասխանաբար «տեղադրել» պահարանում կամ լվացքի մեքենայի մեջ:

**Անհրաժեշտ նյութեր՝**
Լվացքի մեքենայի, պահարանի, մաքուր և կեղտոտ հագուստի նկարներ, քարտեր:

**Ընթացքը՝**
Երեխային առաջադրել հագուստի տարբեր տեսակներ, խնդրել բնութագրել դրանք, այնուհետև «տեղադրել» համապատասխանաբար՝ կեղտոտ հագուստը լվացքի մեքենայի մեջ, իսկ մաքուրը՝ պահարանում: Վերջում ամփոփել սովորած նյութը և խաղալ խաղը:

**Սիրելի՛ փոքրիկ, արի ուշադիր նայենք հագուստների նկարներին և միասին փորձենք բնութագրել դրանք: Ճիշտ նկատեցիր, դրանք գունեղ են, մանկական և մաքուր:**

Իսկ այժմ նայիր այս հագուստներին. ի՞նչ նկատեցիր, ի՞նչ կասես: Այո, դրանք կեղտոտ են, դրանց վրա հետքեր կան: Ի՞նչ պետք է անել այդ դեպքում:

Դրանք պետք է լվանալ և մաքուր հագնել: Այս գործում առաջին հերթին մեզ կօգնի լվացքի մեքենան, որի մեջ անհրաժեշտ է տեղափոխել կեղտոտ հագուստները, ավելացնել մաքրող միջոց, միացնել համապատասխան ծրագիրը:

Որոշ ժամանակ անց, երբ մեքենան ավարտի աշխատանքը, դրանք արդեն մաքուր կլինեն: Իսկ ի՞նչ ես կարծում, հագուստներն արդեն կարո՞ղ են տեղ գտնել պահարանում: Իհարկե ոչ: Դրանք թաց են, և անհրաժեշտ է չորացնել: Ճիշտ նկատեցիր, որ արևային եղանակին հագուստն ավելի արագ է չորանում:

Չորանալուց հետո անհրաժեշտ է խնամքով ծալել հագուստը: Կարծում եմ՝ այդ հարցում կարող ես օգնել մայրիկին,

արդուկել հագուստները և հետո միայն տեղավորել պահարանի մեջ: Տեսնու՞մ ես, թե ինչ քայլեր պետք է անել, որպեսզի դրանք հայտնվեն պահարանում:

Այս գործերը տատիկն ու մայրիկը հիանալի են կատարում: Կարծում եմ՝ գիտես, որ միացրած արդուկին չպետք է մոտենաս. անհրաժեշտ է պահպանել անվտանգության կանոնները: Հագուստը ծալելուց հետո արդեն կարող ենք դասավորել պահարանում: Այստեղ ևս պետք է ամեն ինչ իր տեղում լինի, դասավորված և կոկիկ:

Դե ինչ, քանի որ արդեն իմացար, թե կեղտոտ հագուստն ինչ քայլերից հետո է հայտնվում պահարանում, արի խաղանք:

Նախ տարբերակենք մաքուր և կեղտոտ հագուստը:

| Կեղտոտ հագուստ | Մաքուր հագուստ |
|---|---|
| | |

Կեղտոտ հագուստը տեղափոխիր լվացքի մեքենայի մեջ, իսկ մաքուրը՝ պահարանի: